

մանական, հայ գաղութների պատմության և հայագիտության հետ առնչվող բազմաթիվ գործերի նրա գրչին են պատկանում նաև ավելի քան հարյուր գրախոսություններ, որոնց ինքնին ուսումնասիրություններ են։ Նրա գիտական շատ գործերում լույս աշխարհ են գալիս բազմաթիվ հեղինակներ, անծանոթ մնացած բնագրեր, հայ արվեստի գոհարներ։

Նրա երկար պրպտումների արդյունք հանդիսացող բնագրային հայտնաբերություններից են Հովհան Օձնեցու մի նոր գրվածքը, Հովհան Ոսկերիանի Սաղմոսի մեկնության հայերեն մի նոր թարգմանությունը ասորերեն կրկնագիր մի ձեռագրում, Եփրեմի Գործք առաքելոցի մեկնության հայերեն թարգմանությունը և եույն հեղինակի կցուրդները, Քեովեի, Գիսիսիոս Ազնաբանդրացու, Մակար Բ. Նրուսաղեմացու գործերը և այլն։ Լվովում նրա հայտնաբերած ու հրատարակած՝ Սիմիոն Լեհացու ուղեգրությունը հավաստի կարևոր տեղեկություններ է բովանդակում մի շարք հայ գաղութների պատմության համար։ Գիտական կարևոր նշանակություն ունեն Ակինյանի մատենագրական և միջնադարյան հայ բանաստեղծների գործերին նվիրված ուսումնասիրությունները։ Այս առումով առաջին հերթին աչքի են ընկնում նրա «Մատենագրական հնազանդությունների խորագրով 5 սովոր հատորները, որ ամփոփված են մինչ այժմ միայն անուններով հայտնի թուղթերով հայ մատենագիրների կենսագրությունների լուսաբանումն ու նրանց գործերի հրատարակումը՝ բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ, կարևոր գործերի թվին են պատկանում նաև նրա «Ջաքարիա եպիսկոպոսնեանց և իր տաղերը», «Ենթոն Լամբրանցի, կենսագրությունն ու գրական վաստակը», «Գրիգոր Աղթամարցի և իր տաղերը, բնագիր և քննություն», «Հինգ պանդուխտ տաղասանները և շատ ուրիշները։

Ակինյանի պատմագիտական գործերից են «Գնադանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, պատմական ուսումնասիրություն», «Կիրիսիան կաթողիկոս վրաց, պատմություն հայ

վրացական յարարություններին», «Բաղէշի գաղթը (1500—1704)», նպատակ էր հայոց եկեղեցու պատմության և մատենագրության, «Ականց կամ Ակների վանքը և այլ բազմաթիվ գործեր։ Ակինյանի պատմաքննական մի քանի այլ աշխատություններ, որոնք նվիրված են պատմահայր Մովսես Խորենացու, Վարդանանց հերոսամարտի պատմիչ Նղիշի և այլոց գործերին, տեղիք են տվել մասնագետների միջև երկար վիճարանությունների, քանի որ Ակինյանը փորձել էր խախտել իրենց տեղից այդ նշանավոր պատմիչներին, առանց սակայն վճռական կոմպենսներ ունենալու։

Ակինյանի գլուխ-գործոցն էր լինելու հայ մատենագրության պատմությունը՝ սկսած Ե. զարից մինչև 1800 թ. և, որի վրա նա աշխատում էր շուրջ կես դար։ Այդ գործը բազմաչափ էր լինելու երեք հատորներից, նրա անտիպ գործերից են նաև Պատմություն հայ թարգմանության օտարալեզու բնագրերի (408—1800), Գր. Գալեմբյարյանի հետ կազմած հայերեն հնատիպ գրականության 300 տարիներին (1512—1812) նվիրված գործը, ինչպես նաև Ղրիմի հայ գաղթականության ժամանակագրությունը (1300—1700), Գալադանագիրք հայ կաթողիկոսների 220 թ. մինչև մեր օրերը պատմական և ժամանակագրական ուսումնասիրությունը և բազմաթիվ բնագրագիտական գործեր։

Հ. Ակինյանը հակառակ իր պատկանելի վաստակին զանում էր, որ իր արած գործը լրիվ սկիզբն էր Չնայած իր տարիքին և հիվանդությանը, նա մեծ սիրով ու համակրությամբ էր հետևում ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի ու Մաշտոցի ակադեմիայի մատենագրության կողմից հրատարակված հայագիտական աշխատություններին։

Հ. Ն. Ակինյանի գիտական ժառանգության լավագույն մասը մինչև կոհիլի և կուսման սիրվի, իր արժանի տեղը կգրավի հայ մշակույթի երախտավորների գործերի շարքում։

Ս. Քոլանյան

ՎԼԱԴ ԲԸՆԸՑԵԱՆՈՒ

22.8.1900—8.11.1963

Բուխարեստում վախճանվեց ումինացի մեծանուն գիտնական, արևելագետ և նշանավոր հայագետ պրոֆ. դոկտ. Վլադ Բընըցեանուն, նա ծնվել է Ռումինիայի Տիմիշոարա քաղաքում

և ավարտել Չերնովցիի համալսարանը, ապա իր մասնագիտական ուսումը շարունակել է Ֆրանսիայում, Անգլիայում և Իտալիայում (1924—1932), հմտացել է բազմաթիվ հին ու

նոր լեզուներում, այդ թվում նաև հայերենում։ Պրոֆ. Վլ. Բընըցեանուն իր ստեղծագործական կյանքը նվիրելով հանդերձ հնդեվրոպական լեզվաբանության, հնագույն լեզուների և արեւելքի ժողովուրդների մշակույթի պատմության ուսումնասիրությանը, առաջինն էր, որ Ռումինիայի պատմության մեջ՝ իր իսկ նախածնունդով 1931 թ. համալսարանում սկսեց դասավանդել դասական հայերեն, իսկ 1948—1953 թթ.՝ Ռումինական ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ գրաբար, հայ ժողովրդի պատմություն, հնագրություն և այլն։ 1960 թ. նա հայագիտական առարկաներ էր դասախոսում Բուխարեստի համալսարանում և մեծ եռանդով աշխատում էր հայագիտական նոր կադրեր պատրաստելու նա իր ուսանողներին հաղորդակից էր դարձնում սովետահայ հայագետների նորագույն նվաճումներին և նրանց դաստիարակում խորին հարգանքով դեպի հայ գիտնականները, մասնավորապես դեպի Հր. Աճառյանը։

Պրոֆ. Բընըցեանուի հեղինակած շուրջ 190 գիտական աշխատություններից 90-ը հայագիտական են։ Նրա գործերից շատերը լույս են տեսել ոչ միայն Ռումինիայում, այլև ֆրանսերեն, անգլերեն, ռուսերեն, հայերեն, գերմաներեն, պարսկերեն, նրա հայագիտական գործերը նվիրված են գրաբարին, մեր ժողովրդի պատմությանն ու գրականությանը և հատկապես Ռումինահայերի անցյալին։ Պրոֆ. Բընըցեանուի հայագիտական գործերից են «Հունարեն գերբայներով կազմված դարձվածքների հայերեն թարգմանությունը» ծավալուն ուսումնասիրությունը (1937, ֆրանսերեն), «Հայերը Ռումինական պատմության և կյանքի մեջ» (1938, ռումիներեն), «Երկրավորակերպ լեզու մասնիկը դասական հայերենում» (1957, ռումիներեն), «Արճեշուլ» ռումանական տեղանվան չլուծված խնդիրը» (1959, հայերեն), «Հայագիտության զարգացումը Հայաստանում, դեմոկրատական երկրներում և արտասահմանում» ընդարձակ հոդվածաշարքը (1961—1962, հայերեն), «Ուրարտական տեղանունները հայերենում» (1961, գերմաներեն) և այլն։

Անսպառ եռանդի տեր Ռումինացի գիտնականը 1938—1947 թթ. հիմնադրել ու խմբագրել է «Revue des Etudes Indo-Europeenes» ֆրանսերեն լեզվաբանական կարևոր պարբերականը, ուր իրենց աշխատակցությունն են բերել եվրոպացի նշանավոր գիտնականներ, այդ թվում նաև նշանավոր հայագետներ՝ Ն. Ադոնցը, Պի. Կանին և այլն։ Մեծ է պրոֆ. Բընըցեանուի

երախտիքը նաև Ռումինիայի պատմա-բանասիրական ընկերության արևելագիտական բաժանմունքի հիմնադրման գործում։ Այդ բաժանմունքի 15 խմբակներից երկուսը զբաղվում են հին և նոր հայերենի ու հայ գրականության հարցերով։ Իբրև Ռումինացի արևելագետների դիրեկտոր, պրոֆ. Բընըցեանուն հիմնադրեց ու խմբագրեց բաժանմունքի օրգանը՝ հանդիսացող «Studia et Acta Orientalia» գիտական աշխատությունների ժողովածուն, որի 4 սովորական հատորները, կարևոր արժեք ունեն իրենց արեւելագիտական և հայագիտական բովանդակությամբ։

Պրոֆ. Բընըցեանուն հայ մշակույթի խոշորագույն պրոպագանդիստներից մեկն էր, նա շուրջ մեկ քառորդ դար հայագիտական բովանդակալից զեկուցումներով ու թղթակցություններով մեր ժողովրդի հոգևոր գանձերը հաղորդակից դարձրեց Ռումինացի և հայ լայն հասարակայնությանը, ինչպես նաև արտասահմանյան շատ գիտնականների ուշադրությունը բեռնեց հայագիտության վրա։ Մեծ եղավ նաև նրա մասնակցությունը Բուխարեստի հայերի մշակութային կյանքում, նա ժողովրդի կյանքում Ռումինահայ շարժաթիվների մեջադրում և շատ սիրված աշխատակիցն էր։

Բազմավաստակ գիտնականը 1960 թ. աշնանը Մոսկվայի միջազգային արևելագետների համաժողովին Ռումինիայի արևելագետների կողմից հայագիտական արժեքավոր զեկուցում կարդալուց հետո, հրավիրվեց Հայաստան, ուր մեծ ոգևորությամբ ծանոթացավ հայագիտական հիմնարկների ու գիտնականների աշխատանքներին և հանդես եկավ մի քանի զեկուցումներով։ Ահա այդ տպավորությունների տակ էր, որ մեծ հայասերը հետագայում պիտի գրեր, որ այդ բոլորը զգիս վերջնականապես կապեցին այս երկրին, անոր ժողովուրդին ու ծրեանի հետ։

Ականավոր հայագետը վերջին ժամանակները տպագրության էր պատրաստում իր ամենածավալուն մի քանի գործերը, որոնց թվում «Հայերեն գրաբարի քերականություն» Ա և Բ հատորները, «Հայկական դիցաբանությունն ու առասպելները», «Ուրարտուի և հին Հայաստանի մշակույթի ու քաղաքակրթության պատմությունը» և այլ ուսումնասիրություններ։

Անվանի հայագետի մարմինն իր վերջին ջանքերով համաձայն հողին հանձնվեց հայկական գերեզմանոցում։ Նրա մահը ծանր կորուստ է հայագիտության համար։